



ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հաստուկ դպրոցի
2022-2023 ուսումնական տարվա ընդունելություն

1. Ընդունելությունը կազմակերպել մրցույթի միջոցով 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների համար:
2. Մաթեմատիկա առարկայի քննությունը 7-րդ և 8-րդ դասարաններում կազմակերպել երկու փուլով:
3. **Առաջին փուլն անցկացնել**
7-րդ դասարան՝ հունիսի 20-ին՝ ժամը 9:00-ին,
8-րդ դասարան՝ հունիսի 21-ին՝ ժամը 9:00-ին,
4. Առաջին փուլում տարբերակները պարունակում են 20 խնդիր-վարժություններ, որոնց լուծման համար տրվում է 90 րոպե:
5. Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր (ընդամենը 20 միավոր):
6. Առաջին փուլում միկրոհաշվիչից օգտվել չի թույլատրվում:
7. Երկրորդ փուլ են անցնում 11 և ավելի միավոր հավաքողները:
8. Առաջին փուլի արդյունքները չեն բողոքարկվում, իսկ ստացած միավորները երկրորդ փուլի ժամանակ հաշվի չեն առնվում:
9. **Երկրորդ փուլն անցկացնել**
7-րդ դասարան՝ հունիսի 24-ին՝ ժամը 9:00-ին,
8-րդ դասարան՝ հունիսի 25-ին՝ ժամը 9:00-ին,
10. Երկրորդ փուլում տարբերակները պարունակում են 8-ական առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2,5 միավոր (ընդամենը 20 միավոր), որոնց լուծման համար տրվում է 150 րոպե:
11. Երկրորդ փուլի աշխատանքները գրվում են ծածկագրված տետրերում:
12. Դիմորդները պետք է ներկայանան քննական թերթիկներով՝ նշված ժամին. ուշացումով ներկայացած դիմորդը զրկվում է քննությանը մասնակցելու իրավունքից:
13. Դիմորդի քննասեղանը որոշվում է վիճակահանությամբ:
14. Նախնական ցուցում-բացատրություններ տալուց, յուրաքանչյուր աշակերտին մեկ տարբերակ բաժանելուց հետո նշվում է ժամանակը:
15. Քննասեղաններում հսկողությունն իրականացնում են հանձնաժողովի անդամները և փոխտնօրենները:
16. Աշխատանքները ստուգվում են նույն օրը:
17. Դպրոց ընդունվում են երկրորդ փուլում ավելի բարձր միավորներ հավաքած դիմորդները /մրցույթին մասնակցում են միայն 8 և ավելի միավորները/:
18. **10-րդ դասարանի քննություններն անցկացվում են**
հուլիսի 7-ին՝ ժամը 9⁰⁰-ին- մաթեմատիկա,
հուլիսի 4-ին՝ ժամը 9⁰⁰-ին- ֆիզիկա:
19. 10-րդ դասարանի ֆիզիկա առարկայից 8 և ավել միավոր հավաքած դիմորդները կմասնակցեն մաթեմատիկայի քննությանը, իսկ մրցույթին կմասնակցեն մաթեմատիկայի քննությունից 8 և ավել միավոր հավաքած դիմորդները:
20. **Արդյունքների հրապարակում.**
7-րդ դասարան՝ առաջին փուլ հունիսի 21-ին ժամը 9:00-ին,
7-րդ դասարան՝ երկրորդ փուլ հունիսի 25-ին ժամը 18:00-ին,
8-րդ դասարան՝ առաջին փուլ հունիսի 22-ին ժամը 9:00-ին,
8-րդ դասարան՝ երկրորդ փուլ հունիսի 26-ին ժամը 18:00-ին,
10-րդ դասարան՝ ֆիզիկա հուլիսի 5-ին ժամը 18:00-ին,
10-րդ դասարան՝ մաթեմատիկա հուլիսի 7-ին ժամը 20:00-ին:
21. **Արդյունքների բողոքարկումներ.**
7-րդ դասարան՝ երկրորդ փուլ հունիսի 26-ին ժամը 10:30-13:00,
8-րդ դասարան՝ երկրորդ փուլ հունիսի 27-ին ժամը 10:30-13:00,
10-րդ դասարան՝ ֆիզիկա հուլիսի 6-ին ժամը 10:30-13:00,
10-րդ դասարան՝ մաթեմատիկա հուլիսի 8-ին ժամը 10:30-13:00:
22. 10-րդ դասարան ընդունվում են երկու քննություններից գումարային ավելի բարձր միավոր հավաքած դիմորդները:
23. Արդյունքները կտեղադրվեն physmath.am և fizmat.schoolsite.am կայքերում:

Աշխատակարգը հաստատվել է 2022թ. մարտի 22-ին կայացած մանկավարժական խորհրդի նիստում: